

ԲՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ս. Ս. ԹՈՎՄԱՍՅԱՆ

ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՊՈՏԵՆՑԻԱՅԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԵՎ
ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻ
ՔԱՆԻ ՊՐՈՔԼԵՄՆԵՐ

Արդի գիտությունն իբրև համընդհանուր հասարակական գիտելիք բարդ ճյուղավորված համակարգ է. այն կարելի է հետազոտել տարբեր կառուցվածքային ու ֆունկցիոնալ տեսանկյուններից, որոնցից յուրաքանչյուրն արտացոլում է նրա էական կողմերից մեկը:

Մինչև վերջին տարիներս գիտության գիտական հետազոտությունը զարգանում էր հիմնականում տրամաբանական-իմացաբանական ուղղությամբ:

Ժամանակակից գիտական գիտելիքների տրամաբանությունն ու մեթոդաբանությունը գիտությունն ուսումնասիրում էին իմացության մեթոդների ու եղանակների էվրիստիկական հնարավորությունները պարզելու նպատակով և, գիտությունը դիտելով իբրև օբյեկտիվորեն ճշմարիտ ու սիստեմավորված գիտելիք, սահմանում էին նրանից դուրս գոյություն ունեցող պրոցեսների ու երևույթների հետ գիտության համապատասխանության հիմնական բնութագծերը: Այս տեսանկյունը թույլ տվեց ստեղծել գիտության բավականաչափ հստակ տեսական մի մոդել, ուր համադրված են հետազոտվող երևույթի բովանդակային ու ձևական բնութագծերը, և բացահայտեց գիտության մեջ նորագույն հեղափոխության ձևական-բովանդակային վերլուծության պարամետրերը՝ որոշելով գիտության մի պարագիզմի փոխարինումը մյուսով: Բառի լայն իմաստով այս տեսանկյունը կարելի է անվանել գիտության նկատմամբ կառուցվածքային մոտեցում, և նրա դերը արդի

գիտական հեղափոխության հիմնական դժերի ըմբռնման մեջ, անշուշտ շատ մեծ է:

Շատ ավելի սակավ է ուսումնասիրված գիտության երևույթը մեկ այլ տեսանկյունից, երբ գիտությունը գիտվում է իրրև հասարակական մի ուրույն հաստատություն, որը փոխադրում է սոցիալական այլ ֆենոմենների վրա և կատարում է որոշակի հասարակական ֆունկցիաներ. բայց որում վերջիններիս բովանդակությունն ու կարևորությունը շարունակ փոփոխվում են՝ կապված ոչ միայն գիտության բուն բովանդակության, այլև հասարակական կյանքի մյուս տարրերի որակական փոփոխությունների հետ, տարրեր, որոնց հետ անհրաժեշտաբար փոխադրեցության մեջ է գտնվում գիտությունը:

Գիտության ֆենոմենի վերլուծության նկատմամբ այս մոտեցումը կարելի էր բնութագրել իրրև սոցիալական-ֆունկցիոնալ, քանի որ նրա նպատակը հասարակական կյանքի ամբողջ համակարգի վրա գիտության ներգործության ներքին տրամաբանության մեխանիզմի բացահայտումն է:

Համընդհանուր հասարակական գիտելիքի այս երկրորդ կողմի հատուկ հետազոտության նկատմամբ լարված հետաքրքրությունն օրինաչափ է: Այդ հետաքրքրությունը բնութագրվում է գիտության հասարակական ֆունկցիայի զարգացման որակապես նոր փուլով, գիտության աճող սոցիալականացումով և նրա վերածումով ժամանակակից քաղաքակրթության զարգացման անհնաժանրակիժ գործոններից մեկին: Գիտության սոցիալ-տնտեսական ֆունկցիայի հետազոտության զարգացմանն է մեղ նպատակամղում XX դարի 50-ական թվականներից ծավալված գիտատեխնիկական հեղափոխությունը, որը հանգեցրել է գիտության անմիջական (ճանաչողական) և վերջնական (գործնական) ֆունկցիաների մերձեցմանը, գիտության վերջնական ձևավորմանը՝ իրրև արտադրության հոգևոր պոտենցիալի, որն էապես ազդում է արդի հասարակության սոցիալ-տնտեսական զարգացման ամբողջ ընթացքի վրա:

Ուստի պատահական չէ այն մեծ ուշադրությունը, որ ՍՄԿԿ XXIV համագումարը բեռեց սոցիալիստական հասարակարգում գիտատեխնիկական առաջադիմության և գիտության դերի հետ կապված պրոբլեմների վրա: «Գիտության և տեխնիկայի առաջադիմությունը, — ասվում է XXIV համագումարին ՍՄԿԿ Կենտկոմի տված հաշվետու զեկուցման մեջ, — կոմունիզմի նյութատեխնի-

կական բազայի ստեղծման գլխավոր լծակն է»¹։ Բավական է հիշել, որ համագումարի որոշումների համաձայն, ընթացիկ հնգամյակում երկրի ազգային եկամտի աճի 80 տոկոսը, արդյունաբերական արտադրանքի աճի 87—90 և գյուղատնտեսական մթերքների աճի 100 տոկոսը նախանշված է ստանալ աճի ինտենսիվ գործոնների օգտագործման միջոցով, իսկ արդի փուլում այդպիսի գործոն է գիտությունը՝ կիրառված արտադրության մեջ²։

Հասարակական կյանքի տարրերի հետ գիտության ֆունկցիոնալ բարդ առնչությունների ամբողջ բազմազանությունից մենք կառանձնացնենք միայն մի քանի ասպեկտներ, որոնք վերաբերում են գիտության՝ իբրև հասարակական արտադրության հոգևոր պոտենցիալի, կազմավորմանն ու առաջընթացին և այն ազդեցությունը, որ գիտությունը գործում է ներդաշնակորեն զարգացած անհատի ձևավորման վրա, հնարավորություններ ընձեռնելով, որպեսզի դրսևորի և կատարելագործի իր էությունը կազմող իսկապես մարդկային կարողությունները։

Արտադրության մեջ հոգևոր պոտենցիալի՝ իբրև հասարակության արտադրողական ուժերի գլխավոր տարրերից մեկի, դերը բացարձակ է իր էությունը, բայց փոփոխական՝ պատմականորեն։ Լինելով հասարակական արտադրության կարևոր ու անհրաժեշտ հենարանը նրա զարգացման բոլոր փուլերում, հոգևոր պոտենցիան արտադրական պրոցեսի պատմական կատարելագործման տարբեր փուլերում հանդես է գալիս տարբեր որակներով, տարբեր դերերով։

Մարդու գործունակ պոտենցիան, որ նա կիրառում է արտադրական պրոցեսի անմիջական իրականացման համար, հանդես է գալիս բարդ փոխազդեցության մեջ գտնվող երկու հիմնական ձևերով։ «Աշխատուժ կամ աշխատունակություն ասելով,—գրել է Կ. Մարքսը,— մենք հասկանում ենք ֆիզիկական ու հոգևոր այն ընդունակությունների ամբողջությունը, որ ունի մարդու օրգանիզմը, նրա կենդանի անձնավորությունը, և որը նա գործադրում է ամեն անգամ, երբ որևէ սպառողական արժեք է արտադրում»³։ Աշխատանքային պրոցեսի իրագործման անհրաժեշտ

1 Լ. Ի. Բրեժնև, ՄՄԿԿ Կենտրոնական կոմիտեի հաշվետու ղեկուցումը Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXIV համագումարին, Երևան, 1971, էջ 89։

2 Տե՛ս նույն տեղում, էջ 86։

3 Կ. Մարքս, Կապիտալ, հատ. I, Երևան, 1954, էջ 178։

մշտական պայմանը հանդիսացող այս երկու պոտենցիաները արմատապես տարբերվում են միմյանցից ինչպես բնույթով ու ծագմամբ, այնպես էլ պոտենցիալ հնարավորություններով:

Վերը նշված ունակություններից առաջինը՝ աշխատանքի սուբյեկտի ֆիզիկական պոտենցիան, մարդու՝ իրրեւ կենսարանական էներգետիկական մեքենայի և նյարդային-հեմադդող համակարգի, հնարավորությունների ամբողջությունն է: Այդ ունակությունն ամենից առաջ մարդու կենսաբանական էվոլյուցիայի համադիր արդյունքն է: Նրա հնարավորությունները սահմանափակված են մարդու կենսաբանական կազմակերպումով, որն իր գոյության ամբողջ ընթացքում էական փոփոխություններ չի կրել: Նրա դերը հասարակական արտադրության պրոցեսում ազդակից է պարզ բնական ուժի դերին և արտադրության առարկայացման ընթացքում փուլ առ փուլ փոխանցվում է արհեստական արտադրող համակարգերին՝ այն բնական պրոցեսներին, որոնք հասարակական մարդու գիտելիքների ու բանականության միջոցով փոխակերպվում են արտադրական պրոցեսի տեսակի:

Արտադրության հոգևոր պոտենցիա ասելով մենք հասկանում ենք արտադրության անձնական տարրի մտավոր-ճանաչողական ընդունակությունների ամբողջությունը, որը դրսևորվում է կամ անմիջականորեն աշխատանքային գործունեության ընթացքում՝ համընդհանուր հասարակական էմպիրիկ կամ տեսական գիտելիքի, հմտության, կարողության ձևով, կամ էլ միջնորդավորված՝ նյութական արտադրող համակարգերում և արտադրական պրոցեսների կազմակերպման ու իրականացման նրանց համապատասխանող տիպերում իրայնացած մտքի ուժի ձևով: Գործունակ աշխատուժի հոգևոր պոտենցիան, ի հակադրություն մարդու ֆիզիկական ունակությունների ամբողջության, ամենից առաջ նրա սոցիալական զարգացման ամփոփ արդյունքն է: Նրա հնարավորությունները սկզբունքային սահմաններ չունեն և սահմանափակված են սոսկ պատմականորեն՝ հասարակության սոցիալ-տնտեսական և մտավոր զարգացման որոշակի մակարդակով: Պոտենցիալ կերպով այդ հնարավորությունները նույնքան անսահման են, որքան անսահման է ինքը՝ օբյեկտիվ իրականությունը իր ձևափոխություններով ու կերպափոխություններով: Հասարակական մարդու հոգևոր ունակությունները իրրեւ սոցիալական զարգացման ուրույն արգասիք, եզակի և յուրատեսակ են արդեն իրենց ծագումով ու ֆունկցիայով: Ընություն մեջ նրանք իրենց համանմանը չունեն և արտադրական

պրոցեսում կատարում են առանձնահատուկ մի ֆունկցիա, որը լիովին չի կարող փոխանցվել արհեստական համակարգերին: Ավելին, արտադրության հոգևոր պոտենցիան այն սկիզբն է, որը արտադրական պրոցեսը բնորոշում է որպես առանձնահատուկ օբյեկտիվ պրոցես, բնական նյութի նպատակահարմար ու նպատակադրված ձևափոխության մի որոշակի սոցիալական պրոցես, որը տարբերվում է ինքնաբերաբար ընթացող բնական պրոցեսից և բնության օբյեկտների հետ կենդանու փոխներգործության ձևերից:

Արտադրական պրոցեսի՝ իբրև հիրավի մարդկային, սոցիալական պրոցեսի, ելակետն ու հիմքը նրա ամբողջ ընթացքի նպատակահարմարության փաստն է: «Աշխատանքի պրոցեսի վերջում ստացվում է այն հետևանքը, որն արդեն կար աշխատողի պատկերացման մեջ այդ պրոցեսն սկսելիս, այսինքն՝ իդեալապես: Աշխատողը մեղմից տարբերվում է ոչ միայն նրանով, որ փոխում է բնության տվածի ձևը, բնության տվածի մեջ նա միաժամանակ իրականացնում է իր գիտակցական նպատակը, որն իբրև օրենք որոշում է նրա գործողությունների եղանակն ու բնույթը և որին նա պետք է ենթարկի կամքը»⁴: Աշխատանքային պրոցեսի այս բնութագրումը, որ տվել է Մարքսը, պարզում է այն արմատական տարբերությունը, որն աշխատանքը, իբրև գործունեության ուրույն սոցիալական ձև, սահմանազատում է տարերայնորեն ընթացող բնական պրոցեսներից և կենդանի օրգանիզմների՝ իրենց տեսակի պահպանմանն ու շարունակմանն ուղղված կենսագործունեությունից: Բնական ուժերի փոխազդեցությունը չէ արտադրական պրոցեսի սեռային հատկանիշը. այդպիսի փոխազդեցությունը բնորոշ է ամենից առաջ ինքնաբերաբար ընթացող բնական պրոցեսներին: Կենսաբանական էներգետիկական մեքենայի ֆիզիկական պոտենցիաների գործադրումը չէ, որ աշխատանքը բնութագրում է իբրև ուրույն պրոցես. այդպիսի գործադրումը բավականաչափ զարգացած ամեն մի կենսաբանական սիստեմի գոյության հիմնական պայմանն է: Եվ, վերջապես, նյարդա-զգայական համակարգի բնազդային ռեակցիան չէ աշխատանքն իբրև սոցիալական պրոցես բնորոշողը. ճշտող-կանոնավորող փոխազդեցությունը հատկանշական է ցանկացած աստիճանի բարդության կենդանի օրգանիզմների կենսապրոցեսներին:

⁴ Նույն տեղում, էջ 189:

Ախայն հոգեւոր պոտենցիան, որն արտահայտւում է դիտելիքների կոտակմամբ, մշակումով և արտադրութեան մեջ նպատակահարմար գործադրումով,—միայն այդ պոտենցիան է աշխատանքը բնորոշում իրրե իր էութունը կազմող ուժերի բացահայտման և զարգացման հիմքովի մարդկային եղանակ, իսկ արտադրական պրոցեսը՝ իրրե օբյեկտիվ պրոցեսի ուրույն, սոցիալական ձեւ Այս իմաստով ու ֆունկցիայով արտադրութեան հոգեւոր պոտենցիան միշտ, մարդու առարկայական-զգայական, նյութական-արտադրական գործունեութեան զարգացման ամեն մի փուլում, հանդես է գալիս որպէս հասարակութեան անմիջական արտադրողական ուժ, մի առանձնահատուկ հոգեւոր արտադրողական ուժ, որն իրացւում է սոսկ գործադրւելով նյութապես ընթացող արտադրական պրոցեսում:

Այսպիսով, հասարակական մարդու հոգեկան-մտավոր պոտենցիայը, իրրե աշխատանքային պրոցեսի կարեւորագոյն բաղկացուցիչ, ի սկզբանէ ներառւած է հասարակական արտադրութեան կենդանի հշուտածքի մեջ իրրե մի որոշ հոգեւոր արտադրողական ուժ, որը տարրեր պատմական ձեւեր է ընդունում ինչպէս հասարակութեան նյութական արտադրողական ուժերի, այնպէս էլ օբյեկտիվ իրականութեան ճանաչողութեան մեթոդների ու տիպերի զարգացման ընթացքում:

Հայտնի է, որ արտադրութեան ձեւավորման պատմական պրոցեսը, որ մենք բնութագրում ենք իրրե օբյեկտի բնական ուժերի և աշխատանքի սուբյեկտի էութունը կազմող ուժերի փոփոխւող փոխազդեցութեան պրոցես, ունի փոխակերպումների որոշակի ուղղւածութուն, ընդ որում այդ փոխակերպումները կառուցւած-բայնութեւն առարկայանում են աշխատանքի միջոցի մեջ, աբդյու-նապէս նյութականանում են մարդկային գործունեութեան օբյեկտում և ֆունկցիոնալ կերպով արտահայտւում են իրականացւող արտադրական պրոցեսում արտադրութեան սուբյեկտի էութունը կազմող ուժերի դերի ու տեղի փոփոխութեամբ: Ներկա հոգւածում մեզ ամենից առաջ հետաքրքրում է այս եռամիասնութեան երրորդ օղակը, որի բաղադրամասերն են ստեղծագործող հասարակական մարդու հոգեւոր-մտավոր պոտենցիաները:

Արտադրութեան զարգացման յայտնի մակարդակի բարձրութունից հետադարձորեն դառնալով արտադրութեան հոգեւոր պոտենցիայի ձեւավորման պատմութեանը, կարելի է նշել արտադրողական ուժերի հոգեւոր տարրի զարգացման երեք հիմնական փուլեր, որոնք համընկնում են արտադրութեան իրային, նյութական

տարրի՝ աշխատանքի գործիքների ու միջոցների, զարգացման երեք հիմնական փուլերի հետ: Այս համապատասխանությունը բնավ էլ պատահական չէ, որովհետև արտադրության մեջ հոգևոր պոտենցիայի գործադրման տիպն ու ձևերը որոշվում են ոչ միայն և ոչ այնքան հոգևոր արտադրության, համընդհանուր հասարակական գիտելիքի զարգացման մակարդակով, որքան արտադրողական ուժերի նյութական կողմի՝ արտադրության արհեստական միջոցների, զարգացման մակարդակով:

Այլափոխելով Կ. Մարքսի հանրահայտ արտահայտությունը, բավարար հիմնավորվածությամբ կարելի է պնդել, որ ձեռքի գործիքները տալիս են մեզ մի արտադրություն, որի հոգևոր պոտենցիան էմպիրիկ գիտելիքն է, մեքենան տալիս է մի արտադրություն, որը հիմնված է էմպիրիկ ու տեսական գիտելիքների մի յուրատեսակ համակենցության վրա, և, վերջապես, էլեկտրոնային կառավարման բլոկներով կոմպլեքսային-ավտոմատացված արտադրող համակարգը տալիս է մի արտադրություն, որը հիմնը-ված է բացառապես հոգևոր պոտենցիայի բարձրագույն ձևի՝ սիստեմավորված տեսական գիտելիքների վրա:

Ներկա հոգավածում մենք հնարավոր չենք համարում փոքրիշատե մանրամասնորեն կանգ առնել պատմական զարգացման ընթացքում արտադրության հոգևոր պոտենցիայի և իրային տարրերի փոխադրեցության դիալեկտիկայի վրա: Այստեղ մենք կցանկանայինք շեշտել միայն երկու մոմենտ, որոնք անմիջականորեն բխում են վերը շարադրվածից: Առաջին. հոգևոր պոտենցիան միշտ օրգանապես ներառվում է արտադրության հյուսվածքի մեջ և ի սկզբանե հանդիսանում է արտադրողական ուժերի մի կողմը, Կ. Մարքսի խոսքով ասած, հոգևոր արտադրողական ուժ: Նրա ազդեցությունը արտադրական պրոցեսի վրա նույնքան անմիջական է, որքան առարկայական, նյութական արտադրողական ուժերինը: Այս իմաստով, իր պատմական մարմնավորման ամեն մի ձևով, հասարակական արտադրության զարգացման ամեն մի փուլում հոգևոր պոտենցիան անմիջական արտադրողական ուժ է: Եվ երկրորդ. գիտությունը հոգևոր արտադրողական ուժի պատմական ձևերից մեկն է, որը որպես արտադրության հոգևոր պոտենցիա փոխարինում է էմպիրիկ գիտելիքներին՝ սկզբնապես և մասամբ խոշոր-մեքենայական կապիտալիստական արտադրության դարաշրջանում, և այնուհետև լիովին՝ գիտատեխնիկական դարաշրջանում:

Մեր հոգւածի սկզբում, բնութագրելով աշխատանքի սուբյեկտի գործունակ աշխատութի երկու կողմերը, մենք փորձեցինք ցույց տալ, որ հասարակական մարդը արտադրական պրոցեսի մեջ է մտնում իրրեւ երկու հիմնական պոտենցիաների կրող՝ նյութական պոտենցիայի, որն արտահայտւում է նրա ֆիզիկական ու զգայական ունակութիւնների ամբողջութեամբ, և հոգեւոր, որը մարմնավորւում է նրա սոցիալական զարգացման արդասիրի ու արդունքի, նրա գիտելիքի, ճանաչողական գործունեութեան ուժի մեջ: Առաջին դեպքում հասարակական մարդու էութեւնը կաղմող ուժերը արտադրութեան պրոցեսում դրսեւորւում են, Կ. Մարքսի արտահայտութեամբ, ինչպէս «որոշակի ձեով վարժեցված բնութեան ուժի» մի տեսակ (46, II, 110), երկրորդ դեպքում՝ այն բնական էութեան մեջ, որը ավելի է համապատասխանում նրա՝ իրրեւ հասարակական զարգացման սուբյեկտի սեռային հատկանշին, դրսեւորւում է հատուկ սոցիալական, իսկական մարդկային ձեով:

Հասարակական մարդու նյութական-զգայական, արտադրական գործունեութեան պատմութեւնը՝ դիտված որոշակի տեսանկյունով, ոչ միայն արտադրութեան հոգեւոր պոտենցիայի ձեւավորման և զարգացման պատմութեւնն է, այլև արտադրութեան սուբյեկտի հոգեւոր և ֆիզիկական ունակութեւնների դիալեկտիկական փոխազդեցութեան պատմութեւնը, որի ընթացքում մարդը իրրեւ արտադրողական ուժ հաստատորեն ազատագրւում է բնութեան ուժերի այն ֆունկցիաներից, որ հատուկ չեն իր էութեանը և իրեն զարձնում ու որոշում են որպէս առանձնահատուկ էակ, որի իսկական ֆունկցիան բնութեան բոլոր ուժերը կառավարելու գործունեութեւնն է:

Պատմականորեն այս պրոցեսն իրականանում է հակասական ձեով, անցնելով զարգացման մի շարք անհրաժեշտ փուլեր:

Աշխատանքային գործունեութեան ընթացքում զատվելով բնութեւնից, հասարակական մարդը արտադրութեան զարգացման առաջին աստիճաններում հարկադրված է իրականացնել բնութեան նպատակահարմար վերափոխման պրոցեսը, հանդես գալով նախ և առաջ որպէս հենց բնութեան ուժերի ամբողջութեան կրողը: Նրա մկանների պոտենցիան յուրատեսակ էներգետիկական մեքենա է, որը կոչված է համապատասխան շարժման մեջ դնելու աշխատանքի գործիքներն ու առարկան: Նրա զգայարանները կենսաբանական հայտնիքներ են, որոնք արձանագրում են իրականացվող պրոցեսի շեղումները նորմայից և ազդանշում, որ անհրաժեշտ է դրանք շտկել: Արտադրութեան բուն հոգեւոր-մտավոր

ֆունկցիան այդ շրջանում այնպես է միաձուլված աշխատանքի էներգետիկական և գործարկային ֆունկցիաներին, որ նրա առանձնացումը գործնականում անհնար է: Արտադրության հոգևոր պոտենցիան, մտքի ու գիտելիքի ուժը իրացվում են սոսկ միջնորդավորված ձևով, աշխատանքի սուբյեկտի էությունը կազմող բնական ուժերի գործողություններով, որպես դրանց ֆունկցիա:

Բայց միասնամասնակ գլխի ու ձեռքերի գործունեությունն այդ շրջանում միաձուլված է մեկ սուբյեկտի մեջ, կազմում է ամեն մի արտադրողի միասնական աշխատանքային պրոցեսի երկու կողմները, ռեստի, եթե բավարար չափով չի էլ նպաստում ամբողջական վերցրած հասարակական արտադրության հոգևոր պոտենցիայի զարգացմանը, ապա, համենայն դեպս խթանում է ամեն մի արտադրողի հոգևոր պոտենցիայի կատարելագործումը:

Սակայն, արդեն աշխատանքի էներգետիկական ֆունկցիայի փոխանցումը արտադրության սուբյեկտից բնության այն ուժերին, որոնք մարդը փոխարկել է հասարակական արտադրողական ուժերի, բավականաչափ հստակ տրոշեց արտադրական պրոցեսում ֆիզիկական-զգայական և հոգեկան-մտավոր պոտենցիաների հարաբերակցության զարգացման գերիշխող հետագիծը: Այս ճանապարհի հաջորդ փուլում, որը կապված է խոշոր մեքենայական կապիտալիստական արտադրության ձևավորման ու զարգացման հետ, աշխատանքային ֆունկցիան անմիջական արտադրողի հմտության ու կարողությունների հետ միասին աշխատանքի սուբյեկտից փոխանցվում է արտադրողական ուժեր դարձած բնության ուժերին: Արտադրության զարգացման գլխավոր սկզբունքը «հենց այն է,— գրել է. Մարքսը,— որ ավելորդ դարձվի... ինչպես հատկապես հմուտ ֆիզիկական աշխատանքը, այնպես էլ մկանային լարվածության վրա հիմնված աշխատանքը, իսկ հատուկ հմտությունը... ներդրվի բնության մեռյալ ուժերի մեջ»⁵:

Փուլ առ փուլ ֆունկցիաների փոխանցումը մեքենաներին, ֆունկցիաներ, որոնցում մարդը գերազանցապես հանդես էր գալիս որպես պարզ բնական ուժ, առնվազն երկու արմատական հնարավորություն ընձեռեց. առաջին, արտադրող մարդու, որպես հասարակական էակի, հետագա ձևավորման հնարավորություն, մի էակ, որի ցեղային ֆունկցիան, վերջին հաշվով, մասնակցությունն է արտադրական պրոցեսին իբրև մտավոր-ստեղծագործական պոտենցիայի կրողի, և, երկրորդ, համընդհանուր գիտելիքի՝

⁵ К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. 46, кн. II, стр. 84.

գիտություն, իրրե հասարակական արտադրության հենարանի ու գործունի դերի հետագա ծավալման ու ընդլայնման հնարավորություն:

Մեքենաների կապիտալիստական շահագործման պայմաններում այս երկու հնարավորություններից քիչ թե շատ զգալիորեն իրացվում է միայն երկրորդը:

Աշխատանքի գործիքի կառուցվածքի բարդացումը և անցումը մեքենայական արտադրության, պահանջներին որակապես շատ ավելի բարձր կարգի հոգևոր պոտենցիալի գործադրում արտադրության նկատմամբ, քան աշխատողը, որը զրոհվում էր ձեռքի գործիքների դարաշրջանի անմիջական արտադրողի էմպիրիկ գիտելիքների, փորձի ու հմտության մեջ: Գիտելիքի ճշտության ու խորության աստիճանը, որ իր կատարելագործման ու շահագործման համար պահանջում է մեքենայական տեխնիկան, կարող էր ապահովվել միայն գիտության միջոցով: Ահա թե ինչու ռաշխատանքի միջոցը, հանգես գալով որպես մեքենա, ընդունում է գոյության մի աշխարհի նյութական ձև, որը պայմանավորում է մարդկային ուժի փոխարինումը բնության ուժերով և էմպիրիկ ուսմանային եղանակների փոխարինումը բնագիտության գիտակցական կիրառումով»⁶:

Սակայն կապիտալիստական արտադրական հարաբերությունների ընդերքում, մեքենաների կապիտալիստական շահագործման պայմաններում գիտության, իրրե արտադրության հոգևոր պոտենցիալի բարձրագույն և վերջնական ձևի, կիրառումը անխուսափելիորեն հանգեցնում է գլխի ու ձեռքերի գործունեության սահմանադեմանն ու հակադրմանը միմյանց: Աշխատանքի հոգևոր ֆունկցիան օտարվում է անմիջական արտադրողից և դառնում է որոշակի սոցիալական խավի ֆունկցիա: Բուն արտադրողական աշխատանքը իջնում է առանձին բանվորի մեխանիկական գործողությունների մակարդակին, և բանվորը դառնում է մեքենայի կենդանի հավելում: Ինչպես տեսնում ենք, կապիտալիզմն իր էությունամբ չի կարող և չի էլ ցանկանում օգտագործել հասարակական դարգացման ընթացքում առաջացած հնարավորությունները: Քանի դեռ աշխատանքի պրոցեսում իր մտավոր ընդունակությունները լիովին բացահայտող աշխատավորի օգտագործումը չի դառնում տեխնոլոգիական անհրաժեշտություն, արտադրական պրոցեսի բուն գործառության օբյեկտիվ պայման, կապիտալիզմը

⁶ Կ. Մարքս, Կապիտալ, հատ. I, էջ 405:

որոնում է ու դեռևս գտնում է արտադրության հետ գիտության միացման իր ուրույն ձևերը, որոնց իրացման ժամանակ արտադրության անմիջական ինտելեկտուալացումը կատարվում է անմիջական արտադրողի գրեթե լիակատար ապախնտելեկտուալացման զնով: Այսպիսով, հասարակական արտադրության զարգացման պահանջմունքի և գործունակ աշխատուժի կենսաբանորեն սահմանափակ հնարավորությունների միջև եղած տեխնոլոգիական հակասությունը կապիտալիզմը լուծում է նոր հակասություն ստեղծելու ճանապարհով, հակասություն, որն ընդունում է սոցիալական հակամարտության ձև: Հարկ է, սակայն, շեշտել, որ շնայած արտադրության մեջ գիտության մուտքի կապիտալիստական ուղու ողջ անմարդկայնությանն ու սոցիալական անարդարությանը, մուտք, որն իրականանում է հասարակության անդամների գերակշռող մեծամասնության գործունեությունից հոգևոր-մտավոր ընդունակությունների օտարման միջոցով, այդ օտարումը, եթե դիտենք պատմականորեն, անհրաժեշտ փուլ էր նրա համար, որ «մեծամասնության հաշվին բռնությամբ ստեղծվի հարստություն որպես այդպիսին, այսինքն ստեղծվեն հասարակական աշխատանքի անսահմանափակ արտադրողական ուժեր, միայն որոնք կարող են կազմել ազատ մարդկային հասարակության նյութական բազիսը»⁷:

Վերը նշված հակասությունների վերացումով և օբյեկտիվ հիմքի վրա արտադրական պրոցեսի կառուցմամբ ոչ թե արտադրող սուբյեկտի կենսաբանական օրգանների հնարավորությունների, այլ աշխատանքի առարկայի և արտադրական պրոցեսի նպատակի համեմատ, առաջին պլան է մղվում ու լուծում պահանջում մի նոր հակասություն՝ հիմնված այն գործոնի ներքին անհամասեռության վրա, որը մենք, հետևելով Մարքսին, անվանում ենք հասարակական արտադրության հոգևոր պոտենցիա: Այս հակասության լուծումն արդեն XX դարի կեսերի գիտատեխնիկական հեղափոխության առանձնաշնորհն է:

Գիտատեխնիկական հեղափոխության ծավալման համեմատ ավելի ու ավելի ակնառու է դառնում հենց իր՝ արտադրության հոգևոր պոտենցիայի երկակի ներքին կառուցվածքը. այդ պոտենցիան ներառում է երկու փոխկապակցված ու փոխադասմանավորված կողմեր: Այս միասնության մի կողմում իսկապես ստեղծագործական և, այս իմաստով, իսկապես գիտական աշխատանքն է՝

⁷ Архив К. Маркса и Ф. Энгельса, II (VII), стр. 35.

ուղղված օրչեկտիվ իրականության ճանաչողությունն ու նպատակամետ փոփոխությունը, մյուս կողմում մտավոր գործունեության կրկնողական ձևն է, որը մտավոր աշխատանքի մեջ է մտնում արտադրական պրոցեսում գրաված իր տեղով ու բնույթով, բայց ոչ էությունով։ Որքան մեղ հայտնի է, գիտական ստեղծագործության ժամանակակից հոգեբանությունը գեոես բավականաչափ հուսալի, օրչեկտիվ շափանիշներ չի մշակել հոգեոր գործունեության այս երկու տեսակների տարբերակման համար։ Սակայն բուն հասարակական պրակտիկան, գիտատեխնիկական հեղափոխության դարգացման ընթացքը այս խնդիրը լուծում է՝ և միայն իրենք՝ այսպես կոչված մտավոր մեքենաներին, ինֆորմացիա հավաքող, պահող ու մշակող սարքերին հանձնելով հոգեոր գործունեության նորանոր, անձեռնմխելի թվացող բնագավառներ ու կողմեր, ավելի ու ավելի սահմանափակելով այն ոլորտը, որ մենք անվանում ենք իսկական ստեղծագործություն և գիտական ճանաչողություն։ Այսպիսով, այսօրվա հասարակական պրակտիկական արտադրության նյութական և հոգեոր գործոնների տարբերի միջև ծագած հակասությունը լուծում է սկզբունքորեն հար և նման անցյալին։ Եվ դա պատահական չէ, որովհետև այստեղ քննարկվող հակասությունն ինքր իր բնույթով որակապես չի տարբերվում այն հակասություններից, որոնք ծառանում էին արտադրության առջև մարդկային քաղաքակրթության հասարակական-արտադրական զարգացման նախորդ փուլերում։ Իր հիմնական բնութագծերով, որոնք էական են ներկա հոգվածում շարադրվող ասպեկտի համար, կրկնվող, նոր գիտելիք չստեղծող մտավոր աշխատանքը պատկանում է արտադրության այնպիսի պոտենցիաների թվին, ինչպես մկանային-ֆիզիկական և զգայական-արձագանքող գործունեությունը։ Այդ աշխատանքը սահմանափակ է՝ պայմանավորված մարդու օրգանների կենսաբանական կառուցվածքով, և յուրատեսակ միջանկյալ օղակ է հանդիսանում սոցիալականացված ինտելեկտի ու բնության ուժերի փոխազդեցության միջև, և, այդ պատճառով էլ, արտադրության օրչեկտիվ գործոնների հետ նրա հակասությունը, որն առաջանում է այսօրվա արտադրական պրակտիկայի պահանջմունքների նկատմամբ անհամապատասխանությունից (մարդու ուղեղի երկարատև ու օպերատիվ հիշողության ծավալը, մտավոր գործողությունների կատարման արագությունը և այլն), լուծվում է նույն միջոցներով, ինչ և հասարակական արտադրության պահանջմունքների և արտադրող սուբյեկտի ֆիզիկական

ու զգայական պոտենցիաների սահմանափակ հնարավորությունների միջև եղած հակասությունը:

Գիտատեխնիկական հեղափոխությունն այս հակասությունը վերադրում է մինչ այդ զուտ մարդկային թվացող ֆունկցիան արհեստական համակարգերին փոխանցելու ճանապարհով: Դրանով իսկ գիտատեխնիկական հեղափոխությունը մի կողմից ծայրաստիճան մերկացնում է հասարակական արտադրության ոլորտում եղած նյութական և հոգևոր նախասկիզբների հակադրությունը, մյուս կողմից՝ նյութա-արտադրական պրոցեսի իրային և անձնական տարրերի միջև փոխհարաբերությունների՝ էպպես նոր ուղի է բացում:

Գիտատեխնիկական հեղափոխության ընթացքում այս վերջին հակասության լուծումով ակնհայտ է դառնում այն իրողությունը, որ արտադրության օբյեկտիվ ու սուբյեկտիվ գործոնների փոխհարաբերությունների և փոխազդեցությունների ամբողջ նախորդ պատմությունը ըստ էության եղել է արտադրության գլխավոր գործոնների նոր, իսկապես դիալեկտիկական փոխազդեցության նախապատմությունը, այնպիսի փոխազդեցության, որի մի կողմում գտնվում է արտադրության նյութական գործոնը, որն իրացվում է արդեն իսկական օբյեկտիվ հիմքի վրա, աշխատանքի օբյեկտի և նպատակի շահանիշին համապատասխան, իսկ մյուս կողմում արտադրության հոգևոր գործոնն է, որն ազատագրվել է պատմականորեն անհրաժեշտ, բայց պատմականորեն անցողիկ իր մոմենտից՝ էմպիրիկ գիտելիքից և հանդես է գալիս համընդհանուր հասարակական գիտելիքի՝ գիտության ձևով:

Արտադրության սուբյեկտիվ և օբյեկտիվ գործոնների դիալեկտիկական փոխհարաբերության այս փուլը մեզ ներկայանում է իբրև ապագայի իդեալականացված ենթադրյալ մոդել, որն, անշուշտ, հենվում է արդեն այսօրվա սոցիալ-տնտեսական զարգացման հյուսվածքում բավականաչափ հստակորեն երևացող տենդենցների վրա: Այդ տենդենցների լիակատար դրսևորումը կապված կլինի գիտատեխնիկական հեղափոխության զարգացման փուլերի հետ և կնշանավորի գիտության, իբրև արտադրության միակ հոգևոր պոտենցիայի և հասարակական աշխատանքի վճռական արտադրողական ուժի, վերջնական ձևավորումը:

Նյութական արտադրողական ուժերի հետ գիտության, իբրև հոգևոր արտադրողական ուժերի, փոխհարաբերությունը սկզբունքորեն այլ կերպ է ընթանում, քան արտադրության սուբյեկտիվ

և օբյեկտիվ մոմենտների փոխադրելու թշնամի նախորդ բոլոր ձևերը։ Այդ փոխադրելու թշնամի էպիկենտրոնում արտադրության անձնական տարրի զուգամղման խնդիրը չէ, այդ խնդիրը տվյալ դեպքում կորցնում է իր ռացիոնալ արդարացումը, քանի որ արտադրության մտավոր կողմը, ի տարբերություն ֆիզիկական-զգայականի, օժտված է անսահման զարգացման իմանենա հնարավորությամբ և, այս իմաստով, չի սահմանափակում արտադրության նյութական տարրերի առաջադիմությունը։ Բայց այս զարգացման անհրաժեշտ պայմանը նրա մշտական փոխադրելու թշնամի է արտադրության օբյեկտիվ գործոնների՝ իրրե գործունակ ստեղծագործական ուժի և հոգևոր ստեղծարար պոտենցիաների գործադրման կետի, հետևելով հերթին հոգևոր գործոնի հետ արտադրության իրային տարրերի փոխադրելու թշնամի արտադրական պրոցեսի օբյեկտիվ տարրերի զարգացման անհրաժեշտ պայմանն է։ Այդ փոխադրելու թշնամի, որ արտադրական պրոցեսի, իրրե օբյեկտիվ պրոցեսի ուրույն, սոցիալական ձևի, իրականացման համընդհանուր և բացարձակ պայմանն է, ամբողջ նախորդ պատմական շրջանում իրագործվել է միջնորդավորված ձևով, հասարակական մարդու ֆիզիկական և զգայական գործողությունների միջոցով։ Այս միջնորդավորվող օղակների դիալեկտիկական վերադարձը մարդկային քաղաքակրթության պատմության մեջ առաջին անգամ պայմաններ է ստեղծում հոգևոր և նյութական պրոցեսների աճմիջակայք, իրական կապի համար, նրանց մի միասնական, հիերարխի մարդկային ստեղծագործական պրոցեսի մեջ միաձուլելու համար, պրոցես, ուր տեսական միտքը հանդես է գալիս որպես նպատակադրում և դադարաբանական միջոց, իսկ նյութական կողմը՝ որպես նպատակի առարկայացման իրական միջոցի գործողություն։


Այսպիսով, գիտատեխնիկական հեղափոխությունը առաջին անգամ ստեղծում է պայմաններ, որոնց մեջ համընդհանուր հասարակական գիտելիքը՝ գիտությունը և արտադրությունը կանգնած են դեմ-դիմաց և փոխադրում են անմիջականորեն, առանց միջնորդավորված օղակների օգնության։ Արտադրական պրոցեսի նյութական գործոնների հետ գիտության, իրրե արտադրության հոգևոր պոտենցիայի, այս փոխադրելու թշնամի անմիջականությամբ է արտահայտվում գիտության՝ անմիջական արտադրողական ուժի վերածվելու էական կողմերից մեկը, և արտադրության վերածումը նյութական-ստեղծագործական, առարկայական-մարմնավորող գիտության։

Սակայն իր ձևավորման ընթացքում գիտատեխնիկական հեղափոխությունը միայն գիտության և արտադրության փոխազդեցության նոր պայմաններ չէ, որ ստեղծում է: Վերացնելով իսկական հասարակական հարստության ստեղծման համընդհանուր կախվածությունը ծախսված աշխատանքի (հին ըմբռնումով) քանակից և սահմանելով նրա կախվածությունը գիտության ու տեխնիկայի զարգացման ընդհանուր մակարդակից և արտադրության մեջ գիտության կիրառման աստիճանից, գիտատեխնիկական հեղափոխությունը անմիջական արտադրողի էական, ստեղծագործական, ստեղծարար ուժերի զարգացումը վեր է ածում հասարակական արտադրության զարգացման հիմնական պայմանին:

Եթե XVIII դարի վերջի և XIX դարի սկզբների տեխնիկական հեղափոխությունը կյանքի ու մասսայական օգտագործման կոչեց արտադրող համակարգերի հիմնական տիպը՝ մեքենան, և դրանով իսկ ստեղծեց բարձր մտավոր պոտենցիալով բազմակողմանի զարգացած անհատի ձևավորման հնարավորություն, ապա XX դարի կեսերի գիտատեխնիկական հեղափոխությունը, որն արտադրությունը կազմակերպում է սկզբունքորեն նոր տիպի տեխնիկական սարքերի և գիտության, իբրև արտադրության հոգեկոր պոտենցիայի միակ ու վճռական ձևի, բաղայի վրա, այդ հեղափոխությունը արտադրող սուբյեկտի մտավոր-ստեղծագործական զարգացումը վերածում է տեխնոլոգիական անհրաժեշտության, առանց որի ժամանակակից և, անհամեմատ ավելի շատ, ապագա արտադրությունը չի կարող գործառնել:

Այս անհրաժեշտությունը, որ գիտատեխնիկական հեղափոխության բուն ծնունդն է, պատկանում է այնպիսի տեխնոլոգիական տեղեկանքների թվին, որոնք վիթխարի նշանակության սոցիալական փոփոխություններ են կրում. ընդ որում այդ փոփոխությունները ունենում են զարգացման տրամագծորեն հակադիր հետազոտել՝ կախված իշխող արտադրական հարաբերությունների տիպից:

Այնքան ժամանակ, քանի դեռ իր էական ուժերը ծավալող, բազմակողմանի զարգացած մարդու ձևավորման անհրաժեշտությունը լիովին չի մտել սոցիալ-տնտեսական զարգացման օբյեկտիվ պրոցեսի մեջ, չի դարձել ուղղակի արտադրական անհրաժեշտություն, մինչ այդ ժամանակ մարդկության հումանիստական մեծ իդեալը, որ հասարակության յուրաքանչյուր անդամ ապրի մտավոր-ստեղծագործական լիակատար զարգացում, մի իդեալ, որ հուշակվել է դեռևս ուսոսպիական սոցիալիզմի ուսմունքներում,



մնում էր բարեհոգի երազանք, իղեալ, որին մարդկությունը ձգտում էր, շունենալով նպատակին հասնելու իրական մեխանիզմ։ Կ. Մարքսի, որպես մտածողի մեծությունը ոչ միայն այն է, որ նա հայտնագործեց սոցիալ-տնտեսական զարգացման օրինաչափ հետադիժը, այլև այն, որ XIX դարի կեսի արտադրության մեջ տեսավ տենդենցներ, որոնց նշանակությունը լիովին դիտակցվում է միայն այսօր։ Առաջ քաշելով այն թեզը, որ անհրաժեշտ է հասարակության արտադրողական ուժերի մեծագույն ծաղկումը օրգանապես համատեղել հասարակական մարդու առավել կատարյալ զարգացման և ինքնարտահայտման հետ, նա այդ պրոցեսները դիտում էր ոչ թե իբրեւ երկու անկախ պրոցեսների զուգահեռ շարժում, այլ իբրեւ փոխկապակցված մի պրոցես, ուր երկու բաղադրիչներն էլ օրյակտիվ օրինաչափությամբ մտնում են դիալեկտիկական փոխազդեցության գոտին, փոխ առ փոխ հարաբերակցելով միմյանց որպես ֆունկցիա և արդումենտ։ Հենց արտադրողական ուժերի զարգացումն է, որ որոշակի փուլում պատմական անհրաժեշտություն է դարձնում հասարակական արտադրության մի տիպ, երբ հասարակության իսկական հարստությունը խաբսվում է այնպիսի սուրյակտիվ գործոնի վրա, որը հանդես է գալիս հերավի մարդկային, մարդու էությունը հատուկ դերում, երբ հասարակական հարստության ստեղծումը դառնում է ֆունկցիա՝ կախված մարդու կողմից համընդհանուր հասարակական իմացության յուրացման աստիճանից, բնության զարգացման օրենքների նրա բմբունումից և բնության վրա նրա իշխանությունից, այսինքն, վերջին հաշվով արտադրող հասարակական անհատի մտավոր-ստեղծագործական զարգացման աստիճանից⁸։ Եվ, հակառակը, հենց իր՝ անհատի զարգացումը դառնում է արտադրության ֆունկցիան, մտնում նրա մեջ որպես օրգանական մոմենտ ու բնորոշվում արտադրության զարգացման մակարդակով և զարգանում է հասարակական արտադրության անմիջական և միջնորդավորված պահանջմունքներին համապատասխան։

Գիտատեխնիկական հեղափոխության դարաշրջանում արտադրական պրոցեսի սուրյակտիվ և օրյակտիվ կողմերի օրգանական այս միասնության ու դիալեկտիկական փոխազդեցության մեջ է, մեր կարծիքով, կոմունիստական իդեալի արմատական սկզբունքներից մեկի՝ նոր հասարակարգի մարդու ձևավորման իրական մեխանիզմը, այն մարդու, որը կատարելապես դրսևորում ու զար-

⁸ См. К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. 46, ч. II, № 213—214.

գացնում է իր բոլոր հոգևոր ու ֆիզիկական ուժերը: Կոմունիզմի վերջնանպատակի և գիտատեխնիկական հեղափոխության զարգացման գլխավոր ուղիւ այս միասնության մեջ է պատմական նշանակութուն ունեցող այն խնդրի տեսական իմաստավորման ու գործնական իրականացման հնարավորութուններից մեկը, որ դրել էր ՍՄԿԿ XXIV համագումարը, այն է՝ գիտատեխնիկական հեղափոխության նվաճումները օրգանապես միացնել սոցիալիստական հասարակարգի առավելութունների հետ⁹:

Որ զարգացած անհատի վերածումը արտադրական մեխանիզմի գործառութայն անհրաժեշտ, օբյեկտիվ հոգևոր գործոնի օրինաչափ տենդենց է գիտատեխնիկական հեղափոխության զարաշրջանում, այսօր հասկանում են նաև զարգացած կապիտալիստական երկրներում: Այդ մասին են վկայում այն թեզերը, որ առաջ են քաշում կապիտալիզմի առավել հեռատես կողմնակիցները (Հելբրայթ, Բեւլ, Կոռես, Քիլինգսվորթ, Ժ. Ֆրիդման, Ռ. Արոն և այլք), այլև կապիտալիստական երկրներում ներկայումս ընթացող իրական այն պրոցեսները, որոնք զբաղանության մեջ բնութագրվում են որպես «հեղափոխություն կրթության մեջ»: Կապիտալիզմն սկսում է հասկանալ, որ հասարակության աճը սահմանափակող արմատական տարր են դարձել ավելի շուտ ոչ թե «ֆինանսական» այլ «մարդկային կապիտալի» սահմանները: Արդեն գիտակցվել է և այն միտքը, որ ՍՄԶՄ-ում նրբորեն զգացել են իրավիճակը և ավելի խորն են հասկանում գիտական հեղափոխությունը, քան կապիտալիստական երկրներում: Այս բոլորը ստիպում է նրանց անցկացնել սոցիալական միջոցառումներ՝ ուղղված կապիտալիզմի էկոնոմիկայի գործառութայն պայմանների ապահովմանը: Այդ միջոցառումներն արտահայտվում են ոչ միայն գիտության մեջ երկարատև ներդրումների կտրուկ մեծացումով, այլև մարդկային գործոնի մեջ ներդրումների որակական աճով: Բավական է ասել, որ զարգացած կապիտալիստական երկրներում ուսանողների թիվը վերջին մեկուկես-երկու տասնամյակում կրկնապատկվել է, այդ թվում բնագիտական ֆակուլտետների և տեխնոլոգիական ինստիտուտների ուսանողներինը աճել է 3,2 անգամ: Բայց եթե սոցիալիզմի պայմաններում հասարակական առաջադիմության նպատակներն ու միջոցները հանդես են գալիս

⁹ Տե՛ս Լ. Ի. Բրեմեն, ՍՄԿԿ Կենտրոնական Կոմիտեի հաշվետու զեկուցումը Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXIV համագումարին, էջ 89:

օրդանական միասնության մեջ, որը վեր է ածվում նույնության, և այդ պատճառով էլ անհատի զարգացումը ոչ միայն արտադրության գործառության միջոց է, այլև կոմունիստական իդեալի վերջնանպատակը, ասյա կապիտալիզմի պայմաններում միջոցը հակասության մեջ է մտնում նպատակի հետ, ծնելով նոր հակամարտություններ, որոնք հզոր են սոցիալական կատակլիզմներով:

Ինչպես նշվեց վերը, արդյունաբերական զարգացման դարաշրջանում կապիտալիզմը կանգնելով դիտությունն արտադրության հետ միացնելու անհրաժեշտության առջև, արտադրության ինտեղեկտուալացման պրոբլեմը լուծեց անմիջական արտադրողի ապահովեղեկտուալացման միջոցով: Գիտատեխնիկական հեղափոխության դարաշրջանում անմիջական արտադրողի ինտեղեկտուալացումը դառնում է անհրաժեշտ պայման ոչ միայն առավելագույն շահույթ ստանալու, այլև հենց իր՝ արտադրական մեխանիզմի գործառության համար: Արդեն այսօր կապիտալիզմը արտադրությունն այլ կերպ չի կարող կազմակերպել, քան իբրև գործունակ աշխատուժ կիրառելով բարձր մտավոր, հաճախ գիտական աշխատանքը: Բայց մտավոր աշխատանքի ոլորտը ներգրավելով հասարակության նորանոր շերտեր, կապիտալիզմն այդ աշխատանքը սոցիալապես իջեցնում է վարձու բանվորի աշխատանքի մակարդակին և զբանով իսկ անխուսափելիորեն ընդլայնում է բանվոր դասակարգի սոցիալ-տնտեսական պլատֆորմը, մտավորականության էական մասի սոցիալական կեցությունը մերձեցնում է պրոլետարիատի սոցիալական կեցությանը և օբյեկտիվ պայմաններ է ստեղծում կապիտալի աշխարհի դեմ մղվող պայքարում բանվոր դասակարգի և գիտատեխնիկական մտավորականության զգալի խմբերի սերտ կապի համար: Այդ պրոցեսը դանդաղ է իր զարգացման բուն սաղմնավորման վիճակում: Սակայն գործադուլային շարժման արագ աճը, այսպես կոչված, «սպիտակ օձիբավորների» մեջ, հանուն իրենց իրավունքների պայքարում նրանց համախմբման կազմակերպման նոր ձևերը, ուսանողական երիտասարդության և մտավորականության, այսպես կոչված, ձախ ուղիկալիստական շարժման բուռն պոռթկումը — այս բոլորը կապիտալիստական հասարակարդում մտավորականության խավի վիճակի փոփոխության բավական լուրջ ցուցանիշներ են: Այս շարժումներում դեռևս օտարածին, անարխոսինդիկալիստական շատ բան կա, բայց կարևորն այն է, որ իրենց զարգացման ընթացքում զբանք մոտենում են բանվորական

շարժմանը, հարստանում են պրոլետարական պայքարի տեսութ-
յամբ և պրակտիկայով, կազմակերպում են կապիտալի դեմ
աշխատանքի պայքարի մի նոր ճակատ:

Սոցիալիզմի պայմաններում գիտատեխնիկական հեղափո-
խության և նրա սոցիալական պոտենցիաների ծավալմանը զուգ-
ընթաց ծագում է և մի այլ հիմնական սոցիալական պրոբլեմի
լուծման իրական մեխանիզմը. խոսքը վերաբերում է աշխատանքի
օտարման լիակատար ու վերջնական վերացմանը և աշխատանքի
վերածմանը առաջնահերթ կենսական անհրաժեշտության, ստեղ-
ծարար անհատի ազատ ինքնաարտահայտման ու հաճույքի:

Այս հնարավորության իրականացման ճանապարհին պատմա-
կանորեն երկու հիմնական արգելք է ստեղծվել, որոնք, հետևելով
Հեգելին ու Մարքսին, մենք անվանում ենք աշխատանքի օտարման
ձևեր: Օտարման առաջին ձևը, որն ի հայտ է եկել դեռևս առաջին
մասնավոր-սեփականատիրական ֆորմացիայի ձևավորման փու-
լում, բայց լիակատար շոշափելիություն է ձեռք բերել միայն
կապիտալիզմի դարաշրջանում, հանդես է գալիս որպես կապիտա-
լիստական օտարում աշխատանքի նյութական արժեքների անմի-
ջական ստեղծողից և բնութագրվում է իբրև սոցիալ-տնտեսական
օտարում: Օտարման երկրորդ ձևը կապված է կապիտալիստական
խոշոր-մեքենայական արտադրության պայմաններում աշխատանքի
կրկնվող, բովանդակազուրկ բնույթի հետ, երբ հոգևոր կողմը
օտարված է անմիջական արտադրողից և հակադրված է նրան
որպես մի խորթ ուժ: Արտադրության կապիտալիստական կազ-
մակերպման պայմաններում օտարման այս ձևը սոցիալված է
սոցիալական բովանդակություն, բայց ունի տեխնոլոգիական
ծագում. օգտագործվող տեխնիկայի տիպն է վերջին հաշվով
որոշում աշխատանքային պրոցեսի զարգացման մակարդակը:

Օտարման առաջին և երկրորդ ձևերը գտնվում են փոխազդե-
ցության պրոցեսում, որտեղ իշխող, վճռական դերը, անշուշտ,
պատկանում է օտարման սոցիալական տիպին:

Սոցիալիզմը, հանրայնացնելով արտադրության գործիքներն
ու միջոցները, հենց միայն արդեն այս հեղափոխական գործողու-
թյամբ վերացնում է սոցիալական օտարման հիմքերը, աշխա-
տանքը դարձնելով ամբողջ հասարակության և նրա յուրաքանչյուր
անդամի գործը: Սակայն, օտարման երկրորդ ձևը լիովին չի վե-
րանա ընդ արտադրական հարաբերությունների հեղափոխական
փոփոխությամբ, որովհետև նրա ակունքները գտնվում են արտա-
դրողական ուժերի զարգացման որոշակի մակարդակում: Ուստի

սոցիալիստական հասարակարգը դեպի հիրավի ազատ, հիրավի ստեղծագործական, իրրե մարդկային հաճույքի պրոյուր ծառայող աշխատանքը իր առաջընթացում պետք է պայմաններ ստեղծի օտարման այս վերջին ձևի մնացորդները վերացնելու համար: Կ. Մարքսը «Կապիտալի» նախապատրաստական աշխատանքներում հանճարեղ ձևով բնութագրել է հիրավի ազատ մարդկային աշխատանքի ձևավորման պայմանները: Նյութական արտադրության մեջ, շեշտել է Մարքսը, աշխատանքը իսկապես ազատ բնույթի կարող է ստանալ երկու հիմնական պայմանների առկայության դեպքում. առաջին, և գլխավորը՝ աշխատանքին պետք է տրվի հասարակական բնույթ (բնագծենք, որ աշխատանքի հասարակական բնույթի ասելով այստեղ և մի շարք այլ տեղերում Մարքսը նկատի ունի աշխատանքի սոցիալիստական բնույթը): Երկրորդ, այդ աշխատանքը պետք է ունենա պիտական բնույթ, կրի համընդհանուր գիտական աշխատանքի բնույթ և լինի «ոչ թե մարդու՝ որպես որոշակի ձևով վարժեցված բնական ուժի լարվածություն, այլ այնպիսի սուբյեկտի լարվածությունը, որը արտադրության պրոցեսում հանդես է գալիս ոչ թե մարդու բնական... ձևով, այլ իրրե մի գործունեություն, որը կառավարում է բնության բոլոր ուժերը»¹⁰: Աշխատանքի օտարման այս կողմի հաղթահարումը պատմական պրոցես է: Սոցիալիզմն այդ հաղթահարման համար ստեղծում է բոլոր սոցիալ-տնտեսական պայմանները, բայց անհատի և անմիջականորեն արտադրական աշխատանքի բովանդակության միջև դարավոր հակասության վերջնական վերադրումը կատարվում է միայն գիտատեխնիկական հեղափոխության ծավալման ուղիներում, երբ բուն արտադրական պրոցեսը աշխատանքի սուբյեկտիվ գործոնից օբյեկտիվորեն մի բան է պահանջում, որ գործունակ աշխատուժը արտադրության մեջ գործադրվի միայն մի ձևով՝ ստեղծագործական լարվածության, նյութաստեղծագործական և առարկայորեն մարմնավորվող գիտության ձևով:

Աշխատանքի՝ սոցիալիստական արտադրահարաբերություններով պայմանավորված նոր սոցիալական բնույթի և գիտատեխնիկական հեղափոխության զարգացմամբ պայմանավորված նոր տեխնոլոգիական բովանդակությամբ օբգանական միասնության մեջ իր իրացումն է գտնում գիտական կոմունիզմի մարդասիրական ու օգեշնչող գաղափարներից մեկը՝ արտաքին ու ներքին

¹⁰ К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. 46, ч. II, стр. 110.

հարկադրանքից աշխատանքի լիակատար ազատագրման գաղափարը:

Շարահրվածի հիման վրա կարելի է գալ հետևյալ հիմնական եզրակացություններին.

1. Հոգևոր պոտենցիան աշխատանքի, իբրև իսկական մարդկային պրոցեսի, բացարձակ, համընդհանուր և մշտական պայմանն է: Ավելին, այն հանդես է գալիս որպես ուրույն մի ձև, որն աշխատանքը վերածում է յուրահատուկ մարդկային, սոցիալական պրոցեսի: Այս իմաստով արտադրության հոգևոր պոտենցիան իբրև գործունակ աշխատուժի տարր, միշտ հանդես է գալիս որպես աշխատանքի արտադրողական ուժի բաղկացուցիչ:

2. Արտադրության հոգևոր պոտենցիան իր կառուցվածքով պատմականորեն փոփոխական է և ձևոք է բերում հասարակական պրակտիկայի զարգացմանը՝ համապատասխան տարբեր աստիճանավորումներ ու ձևափոխություններ: Հասարակական արտադրության և համընդհանուր հասարակական գիտելիքի զարգացման առաջին աստիճաններում այն անհրաժեշտորեն հանդես է գալիս էմպիրիկ գիտելիքի ձևով, խոշոր-մեքենայական կապիտալիստական արտադրության դարաշրջանում՝ էմպիրիկ և տեսական գիտելիքների անհրաժեշտ միասնության ձևով: Գիտատեխնիկական հեղափոխության դարաշրջանում արտադրության հոգևոր պոտենցիան լիովին գիտական բնույթ է ձևոք բերում, իսկ գիտությունը վերջնականապես ձևավորվում է որպես անմիջական արտադրողական ուժ:

3. Օրգանական միասնություն գոյություն ունի կոմունիզմի հիմնական սոցիալական իդեալների և գիտատեխնիկական հեղափոխության զարգացման գլխավոր ուղու միջև, մի միասնություն, որը փիլիսոփայական տերմիններով կարելի է ձևակերպել իբրև նպատակի ու միջոցի միասնություն, որը փոխվում է նրանց նույնություն: Սոցիալիստական արտադրական հարաբերությունների և գիտատեխնիկական հեղափոխությանը բնորոշ արտադրական զարգացման նոր տիպի դիալեկտիկական փոխազդեցությամբ կոմունիզմը ստանում է ռեալ մեխանիզմ իր հիմնական իդեալները կենսագործելու, իսկ գիտատեխնիկական հեղափոխությունը՝ անսահման ազատություն լրիվ թափով ծավալվելու համար:

РАЗВИТИЕ ДУХОВНОЙ ПОТЕНЦИИ ПРОИЗВОДСТВА И НЕКОТОРЫЕ СОЦИАЛЬНЫЕ ПРОБЛЕМЫ НАУЧНО- ТЕХНИЧЕСКОЙ РЕВОЛЮЦИИ

Резюме

Духовная потенция является абсолютным, всеобщим и вечным условием труда как подлинно человеческого процесса. Более того, она выступает как специфическая форма, делающая труд специфически человеческим, социальным процессом. В этом смысле духовная потенция производства, как элемент дееспособной рабочей силы всегда выступает в качестве компонента производительной силы труда.

Духовная потенция производства по своей структуре исторически изменчива и приобретает различные градации и модификации в соответствии с развитием общественной практики. На первых ступенях развития общественного производства и всеобщего общественного знания она с необходимостью выступает в форме эмпирического знания. В эпоху крупномашинного капиталистического производства она выступает в форме необходимого единства эмпирического и научного знания. В эпоху НТР духовная потенция производства приобретает полностью научный характер, а наука окончательно формируется как непосредственная производительная сила.

Имеется органическое единство основных социальных идеалов коммунизма и магистрального пути развития научно-технической революции, единство, которое в терминах философии может быть сформулировано как единство цели и средства, переходящее в их тождество. В диалектическом взаимодействии социалистических производственных отношений и нового типа производственного развития, характерного для НТР, коммунизм получает реальный механизм для осуществления фундаментальных идеалов, а НТР—безграничный предел для своего полного развертывания.